ՎԱՍԻԼ Բ-Ի 1000 Թ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԵՐԹՈՒՂԻՆ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Դավիթ կյուրապաղատը իր գահակալության օրոք (966—1000), բացի Տայքի մեծագույն մասից, կարողացել էր տիրել Բյուզանդիայի կողմից վերացված Կայսիկների ամիրայության հողերին և Մրվանյանների զբաղեցրած տարածքի հյուսիս-արևելյան մասերին։ Դավիթ կյուրապաղատի ժառանգական կալվածքներին այդ հողերի միացման պատճառը արձանագրել է Ասողիկը. «Վասիլ թագաւորն Յունաց զԹոռնիկ զօրավարն, որ էր յազգէն Վրաց, աբեղայ ի սուրբ լերինն՝ հանեալ առաքէ առ կիւրապաղատն Տայոց Դաւիթ. և խոստանայ տալ նմա զԽաղտոյառիճ Կղէսուրաւն, զՉորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս, (զորս և ետ իսկ), որպէս զի զօր առաքեսցէ յօգնականութիւն նմա»[1]։ Ինչպես հայտնի է, բյուզանդական կայսրի այս քայլը կապված էր Վարդ Սկլերոսի 976—979 թթ. խռովության հետ, որի ժամանակ Դավիթ կյուրապաղատը օգնություն ցույց տվեց իր վաղեմի բարեկամ Վարդ Փոկասին, խռովությունը ճնշելու գործում։ Հիշյալ ժամանակաշրջանում, որն ընդգրկում էր Վասիլ Բ-ի գահակալության (976—1025) առաջին տարիները, մեծ վտանգ էր սպառնում նաև Բյուզանդական կայսրության ազդեցության ոլորտում գտնվող Տարոնին և Կայսիկների ամիրայության նախկին հողերին։ Այս կապակցությամբ Ասողիկը գրում է. «Եւ մինչ զայսու շփոթմամբ էր թագաւորութիւնն Յունաց՝ խլաթայ և Նփրկերտոյ ամիրայն Բատն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ. և սրով և գերութեամբ անմարդացոյց զգաւառն Տարօնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ»[2]։

Բյուզանդական կենտրոնական իշխանությանը սպառնացող ներքին և արտաքին վտանգը կասեցնելու նպատակով Վասիլ Բ-ն և պարակիմոմենոս (կայսեր սենեկապետ) Վասիլը դիմում են մի շարք կտրուկ միջոցառումների։ Եթե Վարդ Փոկասը Վասիլ Բ-ին կողմնակից զորքի գլուխ անցած պետք է կռվեր Վարդ Սկլերոսի դեմ, ապա բացի ռազմական օգնություն ցույց տալուց, Դավիթ կյուրապաղատի վրա էր դրվում նաև Բյուզանդիայի արևելյան սահմանների պաշտպանությունը։

Խռովությունը ճնշվեց։ Սկլերոսը ապաստան գտավ Բաղդադում։ Թվում էր, թե կենտրոնական իշխանությանը սպառնացող վտանգը վերջնականապես վերացել էր։ Սակայն 986 թ. օգոստոսի 17-ին բուլղարներից բյուզանդական զորքերի կրած պարտությունը պատճառ հանդիսացավ Սկլերոսի առաջխաղացմանը դեպի կայսրության խորքերը։ Այս անգամ, ինչպես Ասողիկն է վկա-

---

1 «Ս տ ե փ ա ն ո ս ի Տարօնեցւոյ Ա ս ո ղ կ ա ն Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 192։

2 Նույն տեղում։

յում[3], նրան աջակցեց Բատը, որն, ինչպես երևում է, չէր հրաժարվել իր տիրույթները ընդլայնելու մտքից։

Խռովության ճնշման գործը կրկին հանձնարարվում է Վարդ Փոկային, որին Վասիլ Բ-ն վերադարձնում է Արևելքի սխոլերի դոմեստիկոսի (սպարապետի) պաշտոնը։ Սակայն, Փոկասը, թերևս, ձանձրացել էր Վասիլ Բ-ի երկդեմ վերաբերմունքից և, իրականացնելով Փոկասների վաղեմի երազանքը, իրեն հռչակում է կայսր։ Թվում է, թե դա նախապատրաստված քայլ էր, քանի որ նրան միացավ նաև Դավիթ կյուրապաղատը, որը հավանաբար իրեն վստահ չէր զգում Վասիլ Բ-ից ստացած հողերի վրա և ուզում էր դրանք ժառանգական դարձնել[4]։ Քաղաքական այդ բարդ իրավիճակում Վարդ Սկլերոսը փորձում է հարել Վարդ Փոկասին, սակայն վերջինս նրան համարում է իր ախոյանը և ձերբակալում։ Վարդ Փոկասն արևելքից մոտեցել էր Կոստանդնուպոլսին, իսկ ապստամբած Արևմտաբուլղարական թագավորության զորքերը Սամուելի (997—1014) գլխավորությամբ սպառնում էին մայրաքաղաքին հյուսիսից։

Վասիլ Բ-ն, լքված լինելով դաշնակիցներից և զգալով իր գահին սպառնացող վտանգը, դիմում է Կիևյան Ռուսիայի իշխան Վլադիմիրին (980—1015)։ Ցնայած մինչ այդ Կիևյան Ռուսիան և Բյուզանդիան թշնամիներ էին[5], Վլադիմիրը որոշում է օգնել Վասիլ Բ-ին, որն իր հերթին, ըստ երևույթին, նրան խոստանում է կնության տալ իր քույր Աննային։ Վլադիմիրը Վասիլ Բ-ին ուղարկում է մի ընտրյալ ջոկատ, որի օգնությամբ, 989 թ. ապրիլի 13-ին Աբիդոսի մոտ վճռական ճակատամարտում նա ջախջախեց Վարդ Փոկասին[6]։

Վասիլ Բ-ն, չցանկանալով Արևելքում նոր թշնամիներ ձեռք բերել, բավարարվեց նրանով, որ Դավիթ կյուրապաղատին ստիպեց իր ժառանգական և կայսրությունից ստացած հողերը կտակել իրեն։ Նա ստիպված էր հաշվի առնել նաև Դավիթ կյուրապաղատի և հայ ու վրաց թագավորների միջև եղած դաշինքը. Ասողիկը վկայում է. «Դաւիթ պաշարեալ զՄանազկերտ քաղաք և սրով և սովով նեղեալ առնու զնա. յորմէ հանեալ արձակեաց զՏաճկաստանեայսն. և ինքն լնու զքաղաքն Հայ և Վրացի բնակչօք ընդ իւրով իշխանութեամբ։ Յայս պատճառէ ի նախանձ բարկութեան բրդեցան ամենայն Պարսիկք և Տաճիկք. և առաքեն դեսպանս պատգամաւ առ Դաւիթ կիւրապաղատն՝ դարձուցանել ի նոսա զքաղաքն, ապա թէ ոչ՝ պատերազմաւ պատահեսցին նմա։

Որոց ընդդէմ պատասխանիս լուեալ՝ ժողովին զօրաց բազմութիւն և ամիրայն Ատրպատականի Մամլան, գան ի գաւառն Ծաղկոյոտն ի գիւղն, որ Կոստեանքն կոչի։

Իսկ կիւրապաղատն Դաւիթ և արքայն Հայոց Գագիկ և Արաս ընդ նմա, և Բագարատ թագաւոր Վրաց՝ գան ընդդէմ նոցա ի գաւառն Բագրևանդ, բանակ

---

3 «Եւ ամենայն զօրք աշխարհին առ հասարակ ի հնազանդութիւն գային, և Բատն Ապահունեաց, և Նփրկերտոյ ամիրայն, և վայրաբնակ Արապիկքն որ ընդ նման» (նույն տեղում, էջ 246—247)։

4 Հմմտ. Հ. Մ. Բ ա ր թ ի կ յ ա ն, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 86)։

5 В. Р. Розен, Император Василий Болгаробойца. Извлечения из летописи Яхьи Антиохийского, СПб., 1883, стр. 23.

6 Նույն տեղում, էջ 25։

մեծ բոլորեալ ի Վաղարշակերտ քաղաքի»[7]։ Թշնամին տեսնելով դաշնակից զորքերի ուժերը, չի համարձակվում մարտի բռնվել և թողնում հեռանում է երկրից։

Դավիթ կյուրապաղատը Բատի օրոք չէր կարողացել տիրել Ապահունիքին, որը դեռ 976—979 թթ. դեպքերի ժամանակ Վասիլ Բ-ն այլ հողերի հետ մեկտեղ տվել էր նրան։ Եվ միայն Բատի մահվանից հետո Դավիթ կյուրապաղատը գրավեց Ապահունիքը Մանազկերտ կենտրոնով[8]։ Այդ գործում նրան օգնեցին հայոց Գագիկ Ա (990—1020), Կարսի՝ Արաս (984—1029) և վրաց Սմբատ-Բագարատ Գ (975—1014) թագավորները։ Հետևաբար, Վասիլ Բ-ն Դավիթ կյուրապաղատի և նրա դաշնակիցների նկատմամբ չէր կարող վարել այն դաժան քաղաքականությունը, որը վարում էր բուլղարների դեմ։ Նա միայն Դավիթ կյուրապաղատին զրկեց իր հողերի վրա ունեցած ժառանգական իրավունքից[9] և այժմ, նրա մահվանից հետո, շտապում էր տիրանալ նրա կողմից կտակված հողերին և ամրապնդել Բյուզանդիայի գերիշխանությունն Արևելքում։ Վասիլ Բ-ն շտապում էր, ըստ երևույթին, լուր ունենալով, որ Դավթի մահը եղել է բռնի։ Ուռհայեցու հաղորդմամբ, Դավթի սպանությունը կազմակերպել և իրականացրել էր վրաց Իլարիոն արքեպիսկոպոսը[10]։

Տայքի իշխանները և եկեղեցին շտապում էին երկրին տեր դառնալ մինչ Դավիթ կյուրապաղատի կտակը ուժի մեջ կմտներ։ Եվ պատահական չէ, որ 1000 թ. Վասիլ Բ-ի Հայաստանում գտնված ժամանակ միայն Տայքում է, որ տեղի ազատազնդի հետ ռազմական ընդհարումներ են լինում։

Սխալ է այն կարծիքը, թե Վասիլ Բ-ն 1001 թ. է եկել Հայաստան, քանի որ 1001 թ. գարնանը նա զբաղված էր Բուլղարիայի Սերդիկայի շրջանում[11] և ապա ութամսյա պաշարումից հետո բարձրաստիճան հոգևորականության օգնությամբ գրավեց Վիդին քաղաքը[12]։ Այնպես որ, նա արևելյան գործերը կարգավորելուց և իր թիկունքը ապահովելուց հետո միայն կարող էր գնալ արևմուտք։ Յահյա Անտիոքացու վկայությամբ, 999 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին կայսրը զբաղված է եղել սիրիական քաղաքների պաշարմամբ և գրավմամբ[13]։

---

7 Ասողիկ, էջ 266—267։

8 Այս անցքերի մասին է խոսում նաև Սմբատ սպարապետը. «...անօրէն ամիրայն պարսից Մամլանն գայր ահագին բազմութեամբ ի վերայ Հայոց, և աւար հարկանէր հրկիզութեամբ և գերութեամբ զաշխարհն Հայոց, զեկեղեցիս, և հասանէր յաշխարհն կուրապաղատին Դաւթի ի գաւառն Ապահունեաց, և յղէ առ Դաւիթ բանս ամբարտաւանս և ասէ, տուր ինձ հարկս ծ ամի, եւ զորդիսն քո գրեա ծառայս ինձ. ապա թէ ոչ գամ բազում զօրօք ի վերայ քո և ով է Աստուած որ փրկէ զքեզ ի ձեռաց իմոց։ Եւ լուեալ զայս Դաւթի ժողովեաց զզօրս իւր, առ և ի Վրաց և ի Հայոց, և բանակ հարկանէր յանուն Տեառն և գնայր ընդ առաջ անօրինին, և իջեալ ի սահմանս Ապա՞ունեաց կայր յաղօթս ինքն և ամենայն վանօրեայքն։ Եւ զկարմրակելն զայրն քաջ կացուցանէր էՀ ձիաւորով պահապան գիշերոյն, և յառաւօտուն պահու գայր ոմն ի զօրաց այլազգեացն Ռ ձիաւորով։ Եւ մինչ այգն զառաւօտն մերկանայր հարան ընդ միմեանս Կարմրակելն և այլազգին... Եւ կալաւ զկինն Մամլանայ և ազդ առնէր Դաւթի Կարմրակելն, և որոյ հասեալ փութանակի զօրքն սաստիկ կոտորածս արար, և Մամլանն մազապուրծ եղեալ գնաց ամօթով»։ (Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Ի Վենետիկ — Ս. Ղազար, 1956, էջ 16—17։ Հմմտ. Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 37)։

9 Ասողիկ, էջ 275։

10 Մատթէոս Ուռհայեցի, էջ 37—38։

11 «История Византии», М., 1967, т. II, стр. 223.

12 И. Иванов, Български старинн из Македония, София, 1931, стр. 557.

13 В. Р. Розен, նշվ. աշխ., էջ 40—41, էջ 333—335, ծան. 277։

Ասողիկը ավելի ստույգ է հայտնում Վասիլի այդ տեղերում գտնվելու ժամանակաշրջանը. «Եւ ի տօնէ Խաչվերացին մինչև ցօր Յայտնութեան Տեառն»[14], այսինքն՝ 999 թ. սեպտեմբերի 14-ից մինչև 1000 թ. հունվարի 6-ը։ Եվ ապա՝ «դարձեալ եկն նա ձմերել յաշխարհն Կիլիկեցւոց, ի Տարսոն քաղաք»[15]։

Դավիթ կյուրապաղատը «վախճանեցաւ յաւուր մեծի փրկական Ջատկին, ի Նոթ թուականին (1000 թ. մարտի 31-ին —Է. Դ.)... Որ և ի լսել ղլուր համբաւոյ մահուան նորա, ի Տարսոն Կիլիկեցւոց, թագաւորն Վասիլ՝ փութանակի յառաջեաց գալ յաշխարհս մեր։ Եւ էլ նա ի կողմանս Մելտինոյ»[16]։ Եփրատը նա անցնում է Թմնիս (Տոմիսա) ամրության մոտ գտնվող գետանցով։ Ասողիկը հայտնում է. «Եւ անցեալ թագաւորն ընդ Հանձիթ և ընդ Բալու՝ ելանէ ի լեառն Կոհերայ,— յաւուր Վարդավառի տօնին[17],— որ ընդ մէջ Հաշտենից, Ծոփաց և Խորձենոյ»[18]։ Այսպիսով, 1000 թ. հուլիսի 7-ին կայսրը գտնվում էր Հաշտենքի հյուսիս-արևելքում, «և անդուստ գայ հասանէ ի գաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիզայ»[19]։ Այս Երիզան շփոթելով Եկեղյաց գավառի Երիզայի (Երզնկա) հետ[20], Արիստակես Լաստիվերտցին գրում է. «Իսկ զկնի մահուան նորա խաղաց ինքնակալ թագաւորն Հոռոմոց Վասիլն՝ ի քսան և հինգերորդ ամի[21] թագաւորութեանն իւրոյ ծանր գինու. և դէմ եդեալ գայ հասանէ յԵկեղեաց գաւառ...»[22]։

Ասողիկի վկայությամբ. «Եւ ամիրայն Նփրկերտոյ քուերորդի Բատին եկն առ նա ի քաղաքն Երիզայ. և արքունատուր ընծայիւք պատուեալ զնա՝ տայ նմա զմաժիստոսութեան պատիւն։ Եւ հրամայէ զօրացն Ջորրորդ Հայոց և Տարօնոյ՝ օգնական լինել նմա յոր պէտս և կոչեսցէ»[23]։ Այստեղ խոսքը Մրվանյան Աբու Մանսուրի մասին է[24]։ Դավիթ կյուրապաղատից հետո Վասիլ Բ-ին հար-

---

14 Ասողիկ, էջ 274։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, էջ 275—276։

17 1000 թ. Վարդավառի տոնը համընկնում էր հուլիսի 7-ին (Մաղաքիա Օրմանեան, Ազգապատում, մասն Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 1176)։

18 Ասողիկ, էջ 275—276։

19 Նույն տեղում, էջ 276։

20 Հմմտ. «Повествование вардапета Аристакэса Ластивертци», перев. с др. арм., Вст. статья и ком. К. Н. Юзбашяна, М., 1968, стр. 142—143, прим. 11.

21 Եթե նկատի ունենանք Վասիլ Բ-ի 25-րդ տարին ներառյալ նրա գահակալության առաջին տարին՝ 976 թ. ապա ստացվում է 1000 թ. (հմմտ. К. Н. Юзбашян, նշվ. աշխ., էջ 143, ծան. 13)։ Արիստակես Լաստիվերտցին ամփոփելով իր ասածը Վասիլ Բ-ի Հայաստանում գտնվելու մասին, գրում է. «Այս եղև ի չորեքհարիւր յիսուն թուականիս և դադարեալ երկիրն հանգիստ ամս չորեքտասան» («Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխատությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 24)։ Այս 450 թ. հիմք ընդունելով, ենթադրվում է, որ Վասիլ Բ-ն Հայաստանում պետք է լիներ 1001 թ.։ (В. А. Арутюнян, Из истории Северо-Восточных пограничных областей Византийской империи в XI веке, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 93)։

Սակայն այստեղ 450 թ. փոխարեն պետք է լինի 449 թ., ինչպես հետևում է Ասողիկի վերը նշված հաղորդումից, իսկ ինչ վերաբերում է 14 տարի տևած խաղաղությանը, ապա ըստ հենց իր՝ Արիստակես Լաստիվերտցու հաղորդման, վրացական և բյուզանդական զորքերի միջև ռազմական գործողություններ են ծավալվում 1015 թ. (Արիստակես Լաստիվերտցի, էջ 25)։ Այնպես որ, հիմք ընդունելով 1000 թ., խաղաղությունը իրոք տևում է 14 տարի և միայն 15-րդ տարում է ընդհատվում։

22 Արիստակես Լաստիվերտցի, էջ 22—23։

23 Ասողիկ, էջ 276։

24 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 198։

կավոր էին տեղական միջավայրից ուժեղ կողմնակիցներ՝ Բյուզանդիայի արևելյան սահմանները պաշտպանելու համար։ Տարոնը Բյուզանդիային միացվեց 966 թ.։ Վասիլ Բ-ն հետագայում բազմիցս համոզվել էր իր դեմ բռնկած խռովություններին Տարոնի իշխանական տան հարելուն[25]։ Եվ այժմ նա Նփրկերտի ամիրային շնորհելով մագիստրոսի տիտղոս՝ նրան հակադրում էր Տարոնի իշխանական տանը։ Այսպիսով Վասիլ Բ-ն մի ռազմական շրջանի վերածեց Տարոնը, Չորրորդ Հայքը (Ծոփաց կողմերը) և Նփրկերտի ամիրայությունը (Աղձնիք). այդ շրջանը պետք է հենարան լիներ պաշտպանության, ինչպես նաև՝ հետագա նվաճումների համար։ Հետագայում Վասպուրականը, Տարոնը և Վերին Միջագետքը մի կառավարիչ են ունենում[26]։ Սակայն, ինչպես ցույց տվեցին 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո տեղի ունեցած դեպքերը[27], այս քաղաքականությունն իրեն չարդարացրեց, քանի որ բյուզանդական կայսրերը հաշվի չէին առնում թուրք-սելջուկների ներխուժումների ահավոր վտանգը, որը դամոկլյան սրի նման կախված էր կայսրության վրա, սպառնալով նրա հետագա գոյությանը։ Նրանք ոչ միայն ցանկանում էին ենթակա երկրներին պահել իրենց ազդեցության ոլորտում, այլև դիմում բոլոր միջոցներին, նրանց հոգևոր կյանքը և մշակույթը ենթարկելու բյուզանդական եկեղեցուն։

XI դ. Հայաստանի գավառների մի շարք բնակավայրերում եղել են բյուզանդական եկեղեցուն պատկանող եպիսկոպոսություններ[28]։ Դրանց ցուցակը մեզ հասել է մի քանի տարբերակներով[29], որոնց միջոցով որոշվում են Տրապիզոնի մետրապոլտության մեջ մտնող հետևյալ եպիսկոպոսությունները. ὁ Χεριάνων (Շարիան), ὁ Χαμάτζουρ (թերևս պիտի կարդալ՝ [Σαρ]τζαμάτζουρ, որը համապատասխանում է Սարչամաձոր բնակավայրին նույնանուն գետի հովտում), ὁ Χαλίου (Գալլ-գետ բնակավայրը, (Կելկիթ), ὁ Παῖπερ (Բաբերդ), ὁ Κεραμέως (թերևս պիտի ուղղել՝ Κερ[σ]ανέως, որը համապատասխանում է ժամյան Կերճանիսին), ὁ Αερίου (Լերրի), ὁ Βιζάνων (Վժան), ὁ Μανανάλεως (Մանանաղի), ὁ Ζαρινάχων (Զեռնակ), ὁ 'Ανδάχων (Անդակ), ὁ Μεσουνή (պիտի ուղղել Μεσου[ρ]νή, որը համապատասխանում է Մծու[ռ]նին, որի մոտ գրանցվում էր Աշտիշատը), ὁ Χαγαίου (Խախ՝ Երզնկայի մոտ), ὁ Σαχάβου (Սուկավետ լեռը, որի մոտ էր գտնվում Սուկավյանների նահատակության վայրը համարվող Վաղարշակերտը)[30], ὁ τὸ Χαβτίτζιν (Հավճիչ), ὁ τὸ Χαντίερζ (թերևս պետք է կարդալ Χαλτίερζ, որը համապատասխանում է Խաղտոյ-ատիճ բնակավայրին?), ὁ τὸ 'Ολνούτης (Օղնուտ = Եղնուտ = Եղանց բերդ), ὁ Φασιανῆς

---

25 Ասողիկ, էջ 191, 251։

26 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 205։

27 Հմմտ. C. Toumanoff, The Background to Mantzikert, Thirteenth International Congress of Byzantine Studies, Oxford, 1966.

28 Ն. Մարի հիմնավորմամբ այդ եպիսկոպոսությունների տարածքի բնակիչները հայ-քաղկեդոնականներ էին (Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. Санкт-Петербург, 1905, стр. 39—41):

29 E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, S. 54, 192—198.

30 И. В. Абуладзе, Грузино-армянские литературные связи в IX—X вв. Исследования и тексты. Тбилиси, 1944, стр. 22—61, 190—191.

(Բասեան կամ Վաղարշավան), ό το Σερμάντζου[31] (Սերմանց լեռան մոտ, Թերևս Ծնունիսում, (Ծնուս)[32]։

Նշված բնակավայրերը Տրապիզոնի մետրոպոլտության ենթակա եպիսկոպոսների նստավայրերն ու Բյուզանդիայի զավթողական քաղաքականության իրականացման հենակետերն էին։ Պատահական չէ, որ Վասիլ Բ-ի երթուղին, ընչին բացառությամբ, անցնում էր դրանց վրայով։

Արշամունիքի Երիզայից Վասիլ Բ-ն «անցեալ յաշխարհն Աղօրի՝ մերձ յամուրն որ Հաւաճիչն կոչի, երեկօթս առնէ»[33]։ Ի տարբերություն Արիստակես Լաստիվերտցու, Ասողիկը Հավճիչի մասին լրացուցիչ տեղեկություններ է տալիս. «Եւ ինքն չուեալ հասանէ ի լեառն Հաւճիչ, ի քաղաքն յայն»[34]։ Այն, որ Հավճիչը համապատասխանում է Χαβτιτ̃ιν տեղանվանը, ինչպես Հոնիգմանն է նշում[35], ակնհայտ է։ Նա այն տեղադրում է Մարդաղի գավառում, սակայն Աղորի աշխարհի այս վայրերում գտնվելը նա հարցականի տակ է դնում։ Այժմ փորձենք ստուգաբանել այդ անունները և տեղագրել։

Հայկական լեռնաշխարհից անցնող ճանապարհները հնուց ի վեր որոշակիորեն կապված են եղել տեղանքի մասնատվածության հետ։ Երկրի տարբեր մասերը իրար հետ կապող ճանապարհների համար մարդիկ օգտագործել են փոքրաթիվ լեռնանցքները, որոնք հայտնի էին կղեսուրք (κλεισοῦραι) անվամբ և միաժամանակ ծառայում էին որպես ստրատեգիական հենակետեր։ Ամենահայտնիներից առաջինը գտնվում էր Տիգրիսի վերին հոսանքների շրջաններում, երկրորդը՝ Հավնունիք գավառում, այժմյան Ղըղըլ Դերբենդ և Կարա Դերբենդ լեռնանցքների շրջանում, իսկ երրորդը՝ Բոնակապանը, Ճորոխ գետի վերին հոսանքների շրջանում։ Առաջինը հարավից անցուղի էր դեպի Արածանիի հովիտը, երկրորդը՝ դեպի Երասխի (Արաքսի) հովիտը, իսկ երրորդը՝ Հայաստանը կապում էր Փոքր Ասիայի հյուսիսային շրջանների հետ։ Առաջին երկու անցուղիներով են անցել Թըգլաթպալասար Ա (1115—1077) և Սալմանասար Գ (859—824) ասորեստանյան թագավորները. դա ապացուցվում է այս տեղերում նրանց թողած արձանագրություններով, իսկ երկրորդ և թերևս նաև երրորդ կղեսուրքով է անցել 401 թ. մ. թ. ա. 10000 հույն զինվորների նահանջի ճանապարհը։

Ն. Ադոնցը, խոսելով Տիգրիսի վերին հոսանքների շրջանում գտնվող կղեսուրքի մասին, նշում է, որ նմանօրինակ ամրացված լեռնանցքները հայկական աղբյուրներում անվանվում են Olor[36], ասորականում՝ Halōras, արաբականում՝ Halūris[37], հունականում՝ Ἰλλυρισός[38]։ Մեկ այլ տեղ նմանօրինակ տեղանուն է հիշատակում նաև Կոստանդին Ծիրանածինը. «...Ցասիանեի սահ-

---

[31] Հմմտ. το κάστρον το Τζερματζοῦ (Constantine Porphyrogenitus, De administrando Imperio, 44, ed. Gy. Moravcsik, Budapest, 1949) այժմյան Ծնուս գետի Քիլիս-չայ վտակի շրջանում — Բինգյոլ (Սերմանց) լեռան հյուսիս-արևելյան փեշերին։

[32] Նշված եպիսկոպոսությունների տեղադրությունը տես՝ Ս. Տ. Երեմյանի կազմած և սույն հոդվածին կցված քարտեզում։

[33] Արիստակես Լաստիվերտցի, էջ 23։

[34] Ասողիկ, էջ 276։

[35] E. Honigmann, նշվ. աշխ., էջ 194—196։

[36] Վաղ միջնադարում պետք է գրվեր Ալոր։

[37] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 11.

[38] Procopius, De aedificiicis, III. 3. 4, ed. H. B. Dewing, London, 1954.

ԿԱՅՍՐ ՎԱՍԻԼ Բ-Ի ԾԻԲՈՒՆԻՆ 1000Ի.


ՊՈՆՏԱԿԱՆ ԾՈՎ
ՏՐԱՊԻԶՈՆ
ՍԱՄՍՈՆ
ՍԱՍՈՒՆ
ՍԱՍՈՒՆ
ՍԱՍՈՒ

մանը էրաքս, այն է Ֆասիս գետը դառնա, ձախ կողմում դեպի Իլլիրիա (τὴν Ἰλλυρίαν) տարածվող շրջաններին տիրեն իրերները, իսկ աջ կողմում մինչև Թեոդոսուպոլիս ընկած շրջանները, ամրոցները և վայրերը գտնվեն մեր թագավորության տիրապետության ներքո»[39]։

Կոստանդին Ծիրանածինը տվյալ դեպքում նկատի ունի ոչ թե Արաքսը, այլ նրա վտակ Մուրցը։ Այս շփոթումը պետք է բնական համարել, քանի որ հնում ենթադրվում էր, որ Եփրատի և Արաքսի ակունքները բխում են շրբաժան Ծիրանյաց (Փալանթոքյան-դաղ) լեռների արևմտյան և արևելյան փեշերից։ Այս նկատի ունենալով կտեսնենք, որ Կոստանդին Ծիրանածինը ճիշտ է նշում բյուզանդացիների և իրերների գրաված շրջանները։ Եվ այս դեպքում Ἰλλυρία անվան տակ նա նկատի ունի վերը նշած Բռնակապանը, որը չի կարելի շփոթել Արիստակես Լաստիվերտցու հիշատակած Աղորի աշխարհի հետ, չնայած, որ երկու դեպքում էլ անվան իմաստը նույնն է[40]։

Այսպիսով, Ալոր (Olor) կամ Ոլոր[41] աշխարհագրական անվան տարբերակները օտար և հայ մատենագրության մեջ հետևյալներն են. Haloras, Halūris, Ἰλλυρισός (Ἰλλυρία), Աղորի (թերևս Ալորի, որով բացատրվում է նաև Լաւռի — Լոռի անվան ծագումը)։ Արիստակես Լաստիվերտցու նշած Աղորի աշխարհի տեղադրության մասին կարելի է խոսել միայն Հավճիշ բերդքաղաքի տեղը ստույգ որոշելուց հետո։

Նմանօրինակ անունները Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ էին։ Ստ. Լիսիցյանը մի հետաքրքիր փաստ է բերում՝ կապված լեռնանցքներում գոյություն ունեցող սրբավայր-վանքերի հետ, որոնք սպասարկում էին լեռներով անցնող ճանապարհորդներին։ Այս տեսակետից հետաքրքիր է Մոկաց աշխարհի Փութկու[42] սուրբ Գևորգի վանքը։ Ըստ ավանդության այստեղ զոհ էին բերում սև աքաղաղների, սակայն վանքում կենդանի էին թողնում միայն երեքին։ Երբ վանքում ձներբուքից պատսպարված մարդիկ լսում էին աքաղաղների կանչը, դա նշան էր այն բանի, որ բուքը ավարտվել է և անմիջապես ճանապարհվում էին։ Այդ տեղը, ինչպես վկայում է Ստ. Լիսիցյանը, Թուրքերն անվանում են Խորոզ-Քիլիսե[43]։ Սակայն այդ ավանդությունը և դրանից բխող անունը պետք է որ ավելի հին լինեն՝ կապված Աստվածաշնչի հետևյալ տողերի հետ. «Ասէ ցնա Յիսուս, ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս»[44]։ Այնպես որ Խորոզ-Քիլիսեն կարող էր լինել հայերենից Հավուց վանքի (կամ Հավաճիշի) թարգմանությունը[45]։ Թերևս այս ավան-

39 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Գ. 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 18։

40 Հ. Բարթիկյանն այս Իլիրիան նույնացնում է Արիստակես Լաստիվերտցու հիշատակած «Աղորի աշխարհի» հետ (նույն տեղում, էջ 236, ծան. 41)։

41 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց։ Մեծ Հայք։ Վենետիկ, 1822, էջ 44։

42 «Փուտկայ» կամ «փութկայ» նշանակում է «քարվանսարայ» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 6, էջ 1305—1307)։

43 Ст. Лисициан, Святыни у перевалов («Советская этнография», 1936, № 4—5, стр. 206—208).

44 «Աստուածաշունչ գիրք հնոց և նորոց կտակարանացս», ջարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց։ Սանկտ-Պետերբուրգ, 1817, ՄԱՍԹ. ԻԶ. 34, էջ 909։

45 «Հաւ — որպէս աքաղաղ, որ՛ հաւ ընտանի, խօսնակ, որ՛ակ, խօրոզ (Հայկազյան բառարան, Վենետիկ, 1837, հ. 2, էջ 71)։

դութեանն են առնչվում Գառնիի մոտ գտնվող Հավուց Թառ վանքի անունը[46], ինչպես նաև «Ճիչագրակ» տեղանունը, որը գտնվում է պատմական Հավնունիք գավառում։ Տիգրիսի վերին հոսանքների շրջանի լեռնանցքներից մեկում Թեոֆիլակտես Սիմոկատտան հիշատակում է Ἀλαλεισός անունով մի ամրոց[47], որի անվան արմատը ἀλαλή նշանակում է «աղաղակ», «ճիչ»[48], որը թերևս նույնպես կարելի է մտցնել վերը նշած անունների շարքում։

Ինչպես տեսնում ենք, Աղորի և Հավճիչ անունները բնորոշ են Հայկական լեռնաշխարհին և կարող էին համապատասխանել բազմաթիվ վայրերի։

Խնդրո առարկա Աղորի աշխարհը և Հավճիչը տեղագրելու համար մենք միայն երկու հենակետ ունենք։ Մեկն այն է, որ վերը բերեցինք Ասողիկից և Արիստակես Լաստիվերտցուց։ Ըստ այդ հաղորդման, Վասիլ Բ-ն Աղորի աշխարհի Հավճիչ բերդ-քաղաքն է գալիս Արշամունիքի Երիզա քաղաքից հետո։ Իսկ մյուս վկայությունը քաղում ենք Արիստակես Լաստիվերտցու աշխատությունից։ Նա խոսելով 1057 թ. անցքերի մասին, գրում է. «Արդ ի լինել մարտին Հոռոմոց, որդի Լիպարտին Իւանէ անուն, որում տուեալ էին ի պարգևի տեղիս բնակութեան զմեծ աւանն Երիզայ ի գաւառին Հաշտենից[49], և որ շուրջ զնովաւ դաստակերտք, սա իբրև լուաւ զայն՝ թէ թագաւորութիւնն յերկուս բաժանեալ է, գնաց և խարանօք էառ զամուրն Եղանց Բերդ կոչեցեալ, և արարեալ զայն ընդ իւրով ձեռամբ՝ դառնայ անդրէն ի գաւառն Աղորի, և յամուրն որ կոչի Հաւաճիչ։ Եւ բարեկամաբար եկ քաղաքն ընդ առաջ նորա. և դատաւորն որ ունէր զհոգս արևելից (է. Դ.)[50]՝ որ յայնժամ անդ հանդիպեցաւ, զոր իբրև ետես՝ վաղվաղակի ունել հրամայեաց։ Եւ առեալ ի նմանէ գանձ անչափ, և ձիս և ջորիս և զամենայն զոր ինչ և նա յարևելից ժողովեալ էր, և զինքն եդ ի յԵղնուտն ի բանտի. և ինքն փոյթ ընդ փոյթ չոգաւ ի վերայ ամուր քաղաքին Կարնոյ»[51]։ Այս հատվածից բխում է, որ Իվանեն տիրում էր Արշամունիքին (նրան այդ կալվածքները պարգևել էր Իսահակ Կոմնենոս կայսրը (1057—1059) և որ Աղորի աշխարհը Հավճիչ բերդ-քաղաքով գտնվում էր Արշամունիքից Կարին տանող ճանապարհներից մեկի վրա։

Այստեղ տեղին է հիշել արաբական աղբյուրներում հիշատակվող Հաֆջիշը՝ կապված Բյուզանդիայի դեմ Սայֆ-ալ-Դաուլայի ռազմական գործողությունների հետ։ Աղբյուրների հաղորդածի հիման վրա Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է. «939 թ. աշնանը Սայֆ-ալ-Դաուլան Մծբինից արշավանքի ելավ դեպի Հայաստան, անցավ Մանազկերտի վրայով և ուղղվեց Կալիկալա (Կարնո քաղաքը), որի դիմաց հոռոմները կառուցել էին Հաֆջիջ (Հավճիչ) անունով մի քաղաք։ Ըստ արաբ պատմիչի (Իբն Զաֆիրի—է. Դ.) վկայության վերջիններս

---

46 Հաւուց Թառը (Ամենափրկիչ) գտնվում է Կուսանաց անապատի՝ Աղջուց վանքի (Սբ. Ստեփանոսի) ճանապարհին (վերջինի մասին տես՝ «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1899, էջ 6, 227, 304։

47 Theophylacti Simocattae, Historiae, II. 9, ed. C. de Boor, Lipsiae, 1887.

48 Հմմտ. Ἐλελεῦ Plutarchi, Vitae parallelae, Theseus, 22, recognovit Cl. Lidskog et K. Ziegler, 1—4, Lipsiae, 1914—1939.

49 Վերը և այստեղ նշվածից երևում է, որ Արիստակես Լաստիվերտցին կամ նրա երկի ընդօրինակողները պարզ պատկերացում չեն ունեցել Արշամունիքի Երիզայի տեղագրության վերաբերյալ։

50 Նկատի ունի Անիի կատեպանությունը, որը համարվում էր «Արևելից կողմանք»։

51 Արիստակես Լաստիվերտցի, էջ 106։

հենց որ լսեցին Սայֆ-ալ-Դաուլայի գալուստը, ավերեցին քաղաքը և փախան։ Համդանյան ամիրան վերադարձավ Արզն և այնտեղ ձմեռեց»[52]։

Այսպիսով, Հավճիշը գտնվում էր Արշամունիքից և Մանազկերտից Կարին տանող ճանապարհների հանգուցակետում։ Եվ դրանով իսկ այն շատ կարևոր ստրատեգիական դիրք էր գրավում, որի մասին է վկայում նաև այն փաստը, որ Վասիլ Բ-ն այստեղ միառժամանակ կանգ է առնում։ Այժմ տեսնենք, թե որտե՞ղ կարող է գտնվել Հավճիշը։

Սայֆ-ալ-Դաուլան Մանազկերտից Կարին և այնտեղից Կողոնիա[53] կարող էր ուղևորվել միայն Կայսիկների ամիրայությունով անցնող ճանապարհով, բայց ոչ Վաղարշակերտի վրայով, որը Բագրատունիների տիրույթների մեջ էր գտնվում և որով հետագայում անցել էր Վասիլ Բ-ն։ Սայֆ-ալ-Դաուլան պետք է Մանազկերտից անցներ Խնունիս, իսկ այնտեղից Կարին տանող Խնունիս-Դարույնք (Հասանկալա) ճանապարհը անցնում է Երասխի գետանցի մոտ գտնվող այժմյան Քյուլլի բնակավայրով։

Արշամունիքի Երիզայից (Ազիգա) Կարին տանող ճանապարհներից մեկը, որի վրա գտնվող Հավճիշից հետո կայսրը ուղղվեց դեպի Մանազկերտ, անցնում է հետևյալ բնակավայրերով. Երիզա-Օդնուտ-Գինեկ=կալա-Ցանջալու-Բայախան=Գյադուկ լեռնանցք-Բալլիֆելիկ-Գելյան-Փաթան-Ջերմուկ-Կոչելուկ, այստեղից անցնում է Արաքսի հովիտը և շարունակում Մ. Մարխոք-Ալթուն-Աբոնու=գոմ-Աբա=քոյ-Գունդուգուդ-Խերբեքլու-Թաթոս, այստեղից Արաքսի գետանցի մոտ գտնվող Քյուլլի բնակավայրը (Խնունիս-Դարույնք ճանապարհի վրա). այնուհետև այստեղից ճանապարհը ուղղվում է դեպի Կարին, Դարույնք բերդ-ավանի վրայով, Մուրց գետի ընթացքով դեպի արևմուտք՝ Փալանթոքյան լեռնանցքով։ Այսպիսով, Արշամունիքից և Մանազկերտից եկող այս ճանապարհները Քյուլլի բնակավայրի մոտ հանդիպում են։ Հենց այս տեղերում պետք է եղած լինի Հավճիշը։

Ղ. Ինճիճյանը Քյուլլի բնակավայրի և դրա շրջակայքի մասին գրում է. «Գիւղ հայոց յորում էին 300 տունք, ամենեքին արք կորովիք. այլ ի պատերազմին Խնուսայ պէյին ընդ Մալազկերտի բազում ամօք յառաջ, զորմէ պատմեցաք ի վերոյ, քայքայեալ եղծաւ այս գիւղ։ Մերձ յայս գիւղ է քարաշէն կամուրջն Երասխայ։

Աւեր քաղաք։ Հուպ ի գիւղն Քիւլլիւ. և ի ստորոտ Պինկէօլ լերին, անկանի ի հարաւակողմն էրգիռումայ իբր 8 ժամաւ հեռի. ի Խնուսայ իբր 6 ժամաւ ի սուրբ Կարապետէն ընդ առանձին ճանապարհ Պինկէօլի՝ իբր 15 ժամաւ. իսկ երկրորդ ճանապարհ Խնուսայ՝ եռօրեայ. ի հնումն էր քաղաք մեծ կոչեցեալ Արծն, ի գիրս տաճկաց Էրզրն»[54]։

Հայտնի է, որ Արծն քաղաքը գտնվում էր Կաբինից (Էրզրումից) հյուսիս, այժմյան Կարարզի բնակավայրի տեղում։ Իսկ Քյուլլիից հարավ, քարե կամուրջի մոտ (որը ամենայն հավանականությամբ պետք է կառուցված լինի հնում), գտնվող «Ավեր քաղաքը» պետք է լինի Հավճիշը։ Եվ դրանից հյուսիս, Երասխի հոսանքով վար, այժմյան Քեփրի-Բողազ կոչվող կիրճի մոտ գտնվող հաջորդ գետանցը, ամենայն հավանականությամբ, պահպանում էր Ասողիկի և Արիս-

52 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 151։

53 Ասողիկ, էջ 179։

54 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա. Ասիա, Հ. Ա., «Հայաստան», Վենետիկ, 1806, էջ 83։

տակես Լաստիվերտցու հիշատակած Սևուկ բերդակ (Սև քար) բերդը[55]։ Այսպիսով հստակ երևում է Կարինը պահպանող արտաքին ամրությունների գիծը։

Վերը նշված Ալլոր-Աղորի բնաշխարհագրական բնութագիրը լիովին համապատասխանում է Հավճիչի գրված և նրա շրջակա վայրերի պատկերին։

Այս վայրերում Արաքսի ոլորապտույտ ճանապարհն անցնում է կիրճերով։ Դեպի այս շրջանը տանող ճանապարհը մանրամասն նկարագրել է Լինչը՝ Մուշից էրզրում ճանապարհորդելիս. «Այժմ,— գրում է նա,— գտնվում էինք վերին Արաքսի ավազանում և մոտենում էինք հյուսիսային շրջաններին... Մենք դնում էինք հյուսիսային ուղղությամբ ավելի քան 6000 ֆուտ բարձրություն ունեցող մառախլապատ լեռնաշխարհով, շուտով մեր առջև տեսանք մակերեսի նշանակալի իջվածք, որը ընդարձակ գետահովիտ էր... Այն (Երասխը կամ Բասենսուն —Է. Դ.) հոսում էր ուղիղ հյուսիս և դրա լայնությունը մոտ 15 յարդ էր։ Դրա հակառակ ափին գտնվում է Քյուլլի քրդական գյուղը, ուր մենք եկանք չորսն անց տասնհինգ։ Այն գտնվում է մոտ 6000 ֆուտ բարձրության վրա»[56]։

---

55 Պտղոմեոսի կողմից Պարթևքում հիշատակվող Καρίπραχα ἄκρα-ին հայերենում համապատասխանում է Սև-քար բերդը (Claudii Ptolemaei Geographia, VI, 5, 2, ed. C. Nobe, Lipsiae, 1845)։ Karitä (հմմտ. քար) հայերեն նշանակում է ամրոց (Ռ. Աբրահամյան, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965, էջ 167)։ Հայերենում կան բազմաթիվ տեղանուններ, որոնց հիմքում ընկած է նաև քար բառը, որը ստացել է ամրացված վայր՝ միջնաբերդ կամ ամրոց իմաստը (օրինակ՝ Երվանդաքար և այլն)։ Այս տեսակետից հետաքրքիր է Կարին քաղաքի անվան ստուգաբանությունը։ Այստեղ նույնպես առկա է պահլավերեն kari- հիմքը, որի k չի>ք։ Ի դեպ Իսիդոր Քարակացին Բեհիսթունից ոչ հեռու, Զագրոսի անցուղու մոտ նույնպես հիշատակում է Καρίνα անունը, սակայն որպես երկրամասի անուն։ Տեղին է հիշել, որ Հայաստանում Կարին քաղաքի անունով էր կոչվել Բարձր Հայքի 9-րդ գավառը։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ Իսիդորի հիշատակած Կարինա անունով կարող էր կոչվել ինչպես երկրամասը, այնպես էլ այնտեղ գտնվող ամրությունը, որը պահպանում էր Զագրոսի լեռներում գտնվող լեռնանցքը, որով անցնում էր միջազգային նշանակություն ունեցող ճանապարհը (Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 171—182)։ Հայաստանում կա ևս մեկ բերդ (Կարուց բերդը), որի անունը հիշեցնում է Καρίπραχα ἄκρα, սակայն առանց «սև» բնորոշման։ Դա հնագույն ամրություն էր, որի շուրջը աճեց Կարս քաղաքը։

Πραχα-ն թերևս կապված լինի πράχνον· μέλαν = սև, կամ πέρχνος = մուգ դույնի բառերի հետ։

Ինչ վերաբերում է ἄκρα-ին, այն հանրահայտ է, որ նշանակում է, «ամրոց»։ Այնպես որ Καρίπραχα ἄκρα և Սև-քար բերդ կամ Սևուկ բերդակ անվանաձևերի միջև եղած կապն ակնհայտ է։

Մեծ Հայքի Մարդաղի գավառում այս անվան ի հայտ գալը պատահական չէր, քանի որ այն կապվում էր մարդերի անվան հետ, որոնց հիշատակում է Իսիդոր Քարակացին Ռագիական Մեդիայի և Խորասանի միջև՝ Պարթևների պետության մեջ (K. Müller, Geographi Graeci Minores., t. 1, Isidori Characeni, Mansiones Parthicae, VII, Hildesheim, 1965)։ Ինչպես Καρίπραχα ἄκρα-ն Պարթևում, այնպես էլ հետագայում Սև-քար բերդը Հայաստանում կարևոր ռազմական նշանակություն են ունեցել։

Καρίπραχα ἄκρα-ն ըստ Պտղոմեոսի նշված տեղադրության գտնվում էր Իսիդոր Քարակացու նշած «Կասպիական դռներին» մոտ (Թեհրանից ոչ հեռու) և դրանց պաշտպանության համար Հրահատ Ա-ն (176—171 մ. թ. ա.) այստեղ էր բնակեցրել մարգերին։

Սև-քար բերդը Մարդաղի գավառում նույնպես շատ կարևոր ռազմական նշանակություն ունեցող վայրում էր կառուցված և պահպանում էր Եփրատի արմունկից վեր Հավճիչ բերդի պահպանած առաջին գետանցից հետո երկրորդ գետանցը։

58 H. F. B. Lynch, Armenia. Travels and Studies. London, 1901, vol. II, p. 188—190.

Ապա լինչը շարունակում է. «Հաշորդ առավոտ դեռ ժամը 8-ը չկար, մենք 14° ցրտին նորից ճանապարհ ընկանք։ Հովտի վրա դեռ մառախուղ էր կախված, սակայն շուտով դրանից ավելի վեր բարձրացանք, նորից բարձրանալով սարահարթի վրա, որը երկու կողմից շրջափակում էր հովիտը... ժ. 10-ին մենք թեքվեցինք արևելք, դեպի մառախուղի կույտը՝ կախված գետի վրա, որը գտնվում է խոր կիրճում»[57]։

Այսպիսով, Արիստակես Լաստիվերտցու հիշատակած Աղորի աշխարհը պետք է համարել ընկած Մարդաղի, Դասնավորք և Հավնունիք գավառների միջև՝ այսինքն Արաքսի ափամերձ լեռնային շրջանները։ Հավճիշը, ինչպես նաև Սևուկ բերդակը ընկած էին Աղորի աշխարհում[58]։

Հավճիշում տեղի ունեցած դեպքերի մասին միանման հայտնում են Ասողիկը և Արիստակես Լաստիվերտցին. Ասողիկի նկարագրությունն ավելի է համապատասխանում դեպքերի հաջորդականությանը, քանի որ, ինչպես երևում է նրա շարադրանքից, նախ և առաջ տեղի է ունեցել Վասիլ Բ-ի հանդիպումն աբխազական և վրացական թագավորների հետ և միայն դրանից հետո՝ բյուզանդական զորքերի և Դավիթ կյուրապաղատի վասալների՝ իշխանների և ազատների ընդհարումը։ Սակայն Արիստակես Լաստիվերտցին իր հերթին ավելի ճիշտ է ներկայացրել այդ ընդհարման դրդապատճառները, քան Ասողիկը։

Հարկ ենք համարում բերելու երկու աղբյուրների վկայությունները. «Անդ ընդ յառաջ եղեն նմա Բագարատ թագաւորն Ափխազաց, և հայր նորա Գուրգէն թագաւոր Վրաց, զոր մեծապատիւ մեծարանօք ընկալեալ զթագաւորն Ափխազաց՝ տայ նմա զկիւրապաղատութեան պատիւն, և զհայրն նորա մաժիստռոս արարեալ՝ արձակեաց զնոսա գնալ յաշխարհս իւրեանց։

Եւ ի նոյն օր գնալոյ նորա պատերազմ մեծ եղև ի բանակին Յունաց յազգս դոյզն ինչ պատճառի. զի իշխանք և ազատք կիւրապաղատին Դաւթի եկեալ բանակեալ էին մերձ առ բանակին Յունաց։ Եւ ի հետևակագնդէն Ռուզաց ոմն ելեալ խոտ տանէր երիվարին իւրոյ. իսկ ոմն ի Վրաց կամեցաւ խլել զայն։ և նորա աղաղակեալ՝ եկն ոմն յիւրոցն օգնել նմա. նոյնպէս և Վրացւոյն յիւրսն աղաղակեալ՝ որք եկեալ սպանանէին զառաջին Ռուզն։ Եւ ապա բոլոր ազգն Ռուզաց, որ ի տեղւոջն յայնմ՝ շարժեցան ի պատերազմ. (զի էին նոքա արք ՉՌ հետևակամարտք, նիզակ և ասպար ի ձեռս նոցա, զորս էր խնդրեալ թագաւորին Վասիլի ի թագաւորէն Ռուզաց, յորժամ եւ զքոյրն իւր կնութեան նմա, յորում ժամանակի և հաւատացին նոքա ի Քրիստոս)։ Եւ ամենայն իշխանքն և ազատք Տայոց եկին ընդդէմ նոցա, և պարտեալք ի նոցանէ»[59]։

«Եւ ընդառաջ ընթանան նմա ազատագունդ զօրքն Տայոց, և առատատուր պարգևօք մեծարեալ ի նմանէ իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց՝ յիշխանու-

57 Նույն տեղում, էջ 191։

58 Ղ. Ինճիճյանը Արիստակես Լաստիվերտցու հիշատակած Աղորին համարում է վրիպակ և առաջարկում է կարդալ Աղորդ, որը Տայքի մի գավառն էր (Մեծ Հայք, էջ 375)։ Մ. Էմինը («Всеобщая история Степаноса Таронского», переведена и объяснена Н. Эминым, М., 1864, стр. 200, прим. 3), Լեոն (Երկերի ժողովածու, Երևան, 1966, հ. 1, էջ 163), Հ. Հյուբշմանը (Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 245, 246) և Թ. Խ. Հակոբյանը (Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 262) Հավճիշը նույնպես տեղադրում են Տայքում։ Հոնիգմանը Հավճիշը տեղադրում էր Մարդաղի գավառում, սակայն Արաքսի հոսանքով ավելի վեր (E. Honigmann, նշվ. աշխ., քարտեզ 4)։

59 Ասողիկ, էջ 276—277։

թիւն, ի պատիւ, ի գահ ժամանեալ՝ ցնծացեալ բերկրեցան յոյժ... Թագաւորն անցեալ յաշխարհն Աղօրի՝ մերձ յամուրն որ Հաւաճիչն կոչի, երեկօթս առնէ։ Եւ ոչ գիտեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս անկեալ արևմտական զօրն, որ կոչի Ռուզք, և ազատագունդն, և ի նմին տեղւոջ մեռան յազատացն երեսուն այր ի յոյժ պատուաւորացն։ Եւ այս ոչ եթէ առաւիր և ի զուր անց ընդ նոսա, այլ քանզի նոքա յաւուր մեծի հինգշաբաթին դեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք նորա, վասն առաջիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին»[60]։

Ինչպես տեսնում ենք, տայոց ազատագունդը կռվի է բռնվում բյուզանդական զորքի ռուսական ջոկատի հետ Բագրատի և Գուրգենի (994—1008) հեռանալուց հետո։ Ըստ երևույթին, Վասիլ Բ-ն Բագրատ Գ-ին[61] պարգևատրելու հետ մեկտեղ նաև սյուզերենի իրավունք էր վերապահել Տայքի վրա, որը տեղի իշխաններին դուր չէր եկել և նրանք ապստամբել էին։ Տայոց ազատագնդի Հավճիչում գտնվելը պատահական չպետք է համարել, քանի որ այն նույնպես մտնում էր Վասիլ Բ-ից Դավիթ կյուրապաղատի ստացած տիրույթների մեջ։

Վասիլը ճնշում է այդ ապստամբությունը, և Կոստանդնուպոլիս վերադարձի ճանապարհին, ինչպես Ասողիկն է տեղեկացնում. «շու արարեալ գնաց ի քաղաքն Ուխթեաց, և զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա, և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհին Յունաց»[62]։ Արիստակես Լաստիվերտցու հաղորդումը նույնպես հաստատում է, որ կայսրը ուժով տիրացավ Տայքին։ «Եւ գայ ի քաղաքն Ուխթեաց, և տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց։ Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»[63]։

Հավճիչից հետո կայսրը ուղևորվում է Մանազկերտ՝ վերը նկարագրված ճանապարհով։ Ի տարբերություն Արիստակես Լաստիվերտցու, Ասողիկը տեղեկացնում է ճանապարհին Վասիլի ունեցած հանդիպումների մասին։ Նա գրում է. «Եւ սակաւ ինչ յառաջ խաղացեալ թագաւորն Վասիլ՝ եկն առ նա թագաւորն Վանանդայ մանուկն Աբաս, ի ձիավարելն ունելով զնշան քաջութեան արիականաւ զարդարեալ գեղու, և Սենեքերիմ թագաւորն Վասպուրականի։... Վասիլ պատուեաց զնոսա արքունատուր պատուով, և ետ նոցա ձիս և ջորիս և հանդերձս պայծառս և ոսկի յոլով և դարձոյց զնոսա յիւրաքանչիւր տեղիս»[64]։ Այս հանդիպումը տեղի է ունեցել կամ Խնումիսում կամ Ջեռնակում (Ζαριναχων)։

Աբասը ավելի քան շահագրգռված էր Վասիլի հետ հանդիպելու և որոշակի համաձայնության գալու, քանի որ Դավիթ կյուրապաղատի մահից և հիշյալ դեպքերից հետո նրա թագավորությունը հարավ-արևմուտքում և հարավում

---

60 Արիստակես Լաստիվերտցի, նշվ. աշխ., էջ 23։

61 Բագրատ Գ-ի մասին ավելի մանրամասն տես՝ Ս. Տ. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները (Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», հ. 2, Երևան, 1947, էջ 118—119)։

62 Ասողիկ, էջ 278։

63 Արիստակես Լաստիվերտցի, էջ 24։ Այս տողերը Վ. Հարությունովա-Ֆիդանյանին բերում են այն եզրակացության, որ Վասիլ Բ-ն 1001 թ. հիմնեց Իբերիա բանակաթեմը (В. А. Арутюнова-Фиданян, Византийские правители фемы Иверия («Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 2, էջ 63—64), սակայն վերը նշածից երևում է, որ այդ իրադարձությունները պետք է տեղի ունեցած լինեին 1000 թ.)։

64 Ասողիկ, էջ 277։

անմիջականորեն սահմանակից էր դառնում կայսրության զավթած հողերին։ Ինչ վերաբերում է Սենեքերիմին (1003—1021), որը այդ ժամանակ գահակից էր իր երեց եղբորը՝ Գուրգենին (990—1003), ապա նրա և եղբոր թագավորությունն արևելքից կրելով սելջուկյան հրոսակախմբերի հարվածները՝ կարիք ուներ Բյուզանդիայի հովանավորությանը։

Կայսրը շարունակելով ճանապարհը. «երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մանազկերտ և զետղ առեալ դառնայ ի վերայ Բագրևանդայ»[65]։ Ասողիկը ավելացնում է. «բանակի ի դաշտին մերձ ի քաղաքն Վաղարշակերտ. մնայր դալըստեան Գագկայ արքային Հայոց։ Այլ նա իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա»[66]։ Բագրևանդը մտնում էր Անիի թագավորության տիրույթների կազմում։ Այնտեղ էր գտնվում Σαχάβου քաղկեդոնական թեմը, որը կայսրի հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լիներ։

Վասիլ Բ-ն ապա ուղևորվում է Ուղթիս (Օլթի), անցնելով Աբասի թագավորությունով, Հավնունիքում գտնվող կզեսուրքով։ Ճանապարհին պետք է անցած լիներ Անդակ բնակավայրով, որը կայսրության քաղաքականության հենակետն էր, քանի որ, ինչպես վերը նշեցինք, այնտեղ գտնվում էր մի քաղկեդոնական եպիսկոպոսություն Ἀνδάχων[67]։

Ավարտելով Արևելքի հետ կապված գործերը, «դարձաւ նա ընդ Կարին ընդ Խաղտոյատիճ ի Կոստանդնուպոլիս»[68]։

Այսպիսով, Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի երթուղին անցնում էր Բյուզանդիայի բռնագրավմանը ենթակա հողերով։ Արշավանքը նպաստեց Արևելքում Բյուզանդիայի գերիշխանության ժամանակավոր ամրապնդմանը։

ЦЕЛЬ И НАПРАВЛЕНИЕ ВОСТОЧНОГО ПОХОДА ВАСИЛИЯ II В 1000 ГОДУ

Э. Л. ДАНИЕЛЯН

Резюме

Итогом восточного похода Василия II Болгаробойцы явилось присоединение к империи земель Давида куропалата как наследственных, так и вновь приобретенных. Император лично, ведя переговоры с эмиром Маяфаркина (Нфркерта) — племянником Бата, с абхазским царем Смбат-Багратом III (975—1014), грузинским царем Гургеном (994—1008), царем Вананда Абасом (984—1029) и царем Васпуракана Иоанном-Сенекеримом (1003—1021), обеспечил господствующее положение империи на Востоке, хотя ненадолго.

Область Алори с крепостью Авчич была расположена к юго-востоку от гавара (округ) Мардали, между гаварами Авнуник и Даснаворк. Упоминаемая по соседству крепость Севук-бердак или Сев-кар локали-

65 Արիստակես Լաստիվերտցի, էջ 24։

66 Ասողիկ, էջ 277—278։

67 Հմմտ. Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 56։

68 Ասողիկ, էջ 278։

зуется к северу от Авчича, вниз по течению реки Аракс. Название крепости Сев-кар находит свою аналогию в названии пункта Καρίπραχα ἄκρα, упоминаемого Птолемеем (Ptol., VI.5.2) в Парфии, у «Каспийских ворот» (около современного Тегерана). Ее охрана, как следует из труда Исидора Харакского, была вверена Фраатом I-ым (176—171) племени мардов (Isid., VII). Указанные пункты и горные проходы находятся в Мардали, в названии которого сохранился этноним «мард». Это указывает на то, что в древней Армении также для охраны горных проходов пользовались вооруженными отрядами мардов, поселенных в этих местах.

Халкедонитские епископства, созданные в глубинных гаварах Армении, являлись опорными пунктами внешней политики Византийской империи на Востоке, поэтому определение их местоположений имеет большое значение для выяснения такого вопроса, как маршрут следования императора Василия II в 1000 г. На основании списка епископств Трапезунтской митрополии устанавливаются пункты, через которые, согласно текстам армянских и византийских историков, прошел во время своей поездки на Восток император Василий II.